

3.

Ժամանակը:

Ն՞րբ արդեօք վերոյիշեալ հանգանակը Հայաստան մտաւ: Չի կրնար ցուցուիլ որ սոյն հանգանակը 604 զարէն առաջ Հայք գործածած ըլլան: Հայերէն թարգմանութեան լեզուն ոչ իւրիք կը վերաբերի՝ 504 զարուն նկարագրական եղած լեզուն՝ որն որ նոյն զարուն վերջերն ալ տեւեց: Վարձեալ. 504 զարուն հայերէն մատենագրութեանց շարքին մէջ՝ աս հանգանակին հետքը կամ անոր սեպհական քանի մը բառեր իսկ գտնուած չեն: Առաջին անգամ զանիկայ կը գտնենք Քաթգենի Հայոց կաթողիկոսի առ Ասորիս բ. թղթոյն մէջ, ուր սանկ կը խօսի. “Արդ զի եւս յայտնագոյն եղեցի խոստովանութեանց մերոյ բան, որպէս հաւատամք մեք Հայք ի Հայր եւ յԱրդի եւ ի սուրբ Հօգին, յորոյ վերայ շինեալ եւ հաստատեալ է սուրբ եկեղեցի, խոստովանիմք զՀայր եւ զԱրդի զԾնեալն ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս, անսկիզբն, մարմնացեալ ի սրբոյ Կուսէն՝ Մարիամայի փրկութիւն արարածոց, անբննելի անարար Ծնեցեան օրինակաւ, կոյս մնայով մօրն. եւ ի սուրբ Հոգին յսկեղն եւ ի կառարարեալն.,”: Քաթգենի ա. թուղթը որուն մէջ դեռ աս գաւանութենէն հետք կամ յիշատակ չկայ, գրուած է “յԵՃԻ ամի Կաւատայ արքայից արքայի,” ինչպէս որ թղթոյն սկիզբները նշանակուած է. ուստի իբր 504ին՝ Քաթգեն մինակ զուտ Նիկիական հանգանակը կը ճաննայ, գոնէ իբրեւ զխաւոր եւ հասարակ Հայաստանի մէջ. եւ հոն նոյնը գրեթէ ամբողջ յառաջ կը բերէ ոսկեղէն լեզուաւ 504 զարուն առաջին կիսոյն որն որ այնչափ հեռու է Քաթգենի լեզուէն՝ որչափ երկինք յերկրէ: Ուստի շատ հաւանական կը համարինք որ աս առաջին եւ երկրորդ

1 Կաւատ ըստ նորագոյն քննութեանց թագաւորած է 488ին (տես Th. Nöldeke: Eltabar's Geschichte der Sasaniden, Leyden, 1879) ըստ այսմ՝ այս թուղթն գրուած ըլլալու 506ին: Սակայն Կաւատայ թագաւորութիւնն իբր 4 տարի ընդհատած է Ջամասպայ ապստամբութեամբն՝ յամին 496: Արդ ինչիւր կրնայ յառնել թէ ինչպէս կը հաշուէին Հայք Կաւատայ թագաւորութեան տարիներն. արդեօք այս 4 տարին իւր կառավարութեան թուականէն կը հանելին թէ մեկտեղ կը գումարէին: Հիմակուան ժամանակս յայտնի բան է եւ որոշ գիտենք թէ ինչպէս գործածած են Պարսկաստանեայք եւ մեր Հայք. այսինքն թողով մեկից Ջամասպայ թագաւորութեան 4 տարին, հաշուելով միայն իւր կառավարութեան տարիները: Ըստ այսմ՝

Կաւատայ 18երորդ տարին կը ըլլայ 510 տարին: — Այս ժամանակագրական մեծ գիւտը թէեւ Հեղինակին է, սակայն ինքը նոյն ժամանակուան ժամանակագրութեանց հետեւելով Կաւատայ թագաւորութեան սկիզբը կը համարի 486—87 տարին, եւ այսպէս իբր երկու տարւան ժամանակագրական տարբերութիւն կը մտնէ: Իսկ հոս նշանակած 504 թուականն (որ է բոլոր Ջամասպայ թագաւորութեան տարիներն ալ մեկտեղ հաշուեն) անշուշտ անմտագրութեան սխալ մ'ըլլալու է. ինչու որ ինքն է որ իւր ուրիշ (անտիպ) մէկ գրութեան մէջ մտադիր կ'ընէ որ “Ջամասպայ տարիներն պէտք չէ մեկտեղ հաշուել, ինչպէս էր Պարսկաստանեայց եւ մեր Հայոց սովորութիւնը. . . . , եւ ըստ այսմ կը նշանակէ 508 թուականն: Եւ. Հրտ.: